

ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԹԵՍԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄԸ ՄԱՐԶՊԱՆԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Ո. Վ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Մեծ է եկեղեցու դերը հայ ժողովրդի պատմության մեջ: Այն առավելապես դրսևորվել է ազգային պետականության բացակայության պայմաններում, երբ եկեղեցին համախմբել է հայ ժողովրդին և նրա ներկայացուցիչը եղել օտար ատյաններում: Հայոց պատմության մարզպանական շրջանում նույնպես եկեղեցին կարևոր դեր է ունեցել: Ինչպես հայ եկեղեցու պատմության շատ հարցեր, թեմական բաժանման հարցն էլ նորովի քննության կարիք ունի:

Գործելով հայ իրականության մեջ՝ հայ եկեղեցին չէր կարող զերծ մնալ բոլոր պատմաքաղաքական դեպքերից, ուստի հայ եկեղեցու թեմական բաժանումը մենք դիտում ենք որպես պատմական տարբեր ժամանակահատվածների արտահայտություն:

Բռնությամբ տիրելով քրմական դասի սեփականությանը, ինչպես վկայում է Ազաթանգեղոսը¹, հայ քրիստոնեական եկեղեցին իր ձեռքը վերցրեց նաև քրմության ողջ իշխանությունը, որից հետո որոշ զիջումներ արեց քրմական դասի վերնախավին: Այս մասին է վկայում Ազաթանգեղոսի այն տեղեկությունը, ըստ որի Գրիգորը քրմերի որդիներից 12 հոգու ձեռնադրում է եպիսկոպոս (Ազաթ., ճԻԱ):

Հայ եկեղեցու կազմավորման և երկրում իր իշխանությունը տարածելու նպատակով Գրիգորը «բազմացոյց կացոյց տեսուչս եպիսկոպոսս յամենայն գաւառս Հայոց իշխանութեան իւրոյ և որ յաստիճան եպիսկոպոսութեան ձեռնադրեցան աւելի քան զչորեքհարիւր եպիսկոպոս, որք կացին տեսուչք տեղեաց տեղեաց» (Ազաթ., ճԻԳ):

Սակայն սա միակ միջոցառումը չէր, որ եկեղեցին ձեռնարկեց իր իշխանությունը երկրում ամրապնդելու համար: Այնուհետև եկեղեցու առաջնորդներն աշխատանք էին տանում եկեղեցական կենտրոնը՝ կաթողիկոսարանը, կազմակերպելու ուղղությամբ: Այս տեսակետից շատ կարևոր է Փավստոս Բուզանդի այն տեղեկությունը, որ Ներսես եպիսկոպոսապետի ժամանակ նրա պալատում կային գործակալներ, ներքին խորհրդակցաներ², իսկ Ներսեսի ներքին խորհրդարանում կային 12 եպիսկոպոսներ նրան խորհրդակից և աթոռակից, բացի գավառների բոլոր եպիսկոպոսներից, որոնք նրան էին ենթարկված (Բուզ., 6.Ե), (12-ը թերևս ընտրված է Քրիստոսի 12 աշակերտների թվից):

Կաթողիկոսարանում կային նաև այլ պաշտոնյաներ՝ աղքատանոցների տեսուչը (Բուզ., 6.Ե), միայնակյացների վարդապետն ու առաջնորդը, վանքերի վերակացուն, անապատականների ուսուցիչը (Բուզ., 6.ԺԶ): Եկեղեցական

¹ Տե՛ս Ազաթանգեղայ Պատմութիւն Հայոց, Աշխատութեամբ Գ. Տեր-Մկրտչեան և Ստ. Կանայեանց, Տփլիս, 1909, ճԹ-ճԺ (այսուհետ՝ Ազաթ.):

² Տե՛ս Փավստոսի Բուզանդացոյ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912, 6.Ե (այսուհետ՝ Բուզ.):

աստիճանակարգությունում կար պաշտոնյաների գլխավոր, որը կոչվում էր նաև սարկավագապետ (Բուզ., 6.ԺՁ):

Եկեղեցու իշխանությունը զավառներում (Բուզ., 6.ԺԵ) և կողմերում (Բուզ., 5.ԻԹ) իրականացվում էր եպիսկոպոսների գլխավորությամբ:

Հայ եկեղեցին իր ներկայացուցիչներն ուներ նաև բանակում, որոնք կոչվում էին «բանակի հոգևոր պաշտոնեաներ» (Բուզ., 3.ԺԴ), ինչպես նաև արքունի ընտանիքներում³, որտեղ պաշտոնավարում էին եպիսկոպոսները կամ քահանաները⁴, և նախարարական ընտանիքներում, ուր ծառայում էին երեցները⁵:

Ամբողջ երկրում առկա հոգևոր համակարգը կառավարելու համար եկեղեցին իրեն ենթակա տարածքները բաժանում է հոգևոր վարչական միավորների՝ թեմերի, որոնք էլ իրենց հերթին, ինչպես վկայում է Մովսես Խորենացին, բաժանվել են վիճակների:

Հայ եկեղեցուն ենթակա հոգևոր թեմերի մասին պատմական աղբյուրների հիշատակությունները սակավ են և իրարամերժ: Այսպես, Ագաթանգեղոսը հիշատակում է, ինչպես վերը նշվեց, Գրիգոր Լուսավորչի կողմից 400 եպիսկոպոսների ձեռնադրման մասին, որոնք որպես տեսուչներ պետք է պաշտոնավարեին գավառներում և տեղերում: Թեև չի բացառվում Մեծ Հայքում 4-րդ դարի սկզբին 400 եպիսկոպոսների գոյությունը, բայց բացառվում է այն տեսակետը, որ յուրաքանչյուր եպիսկոպոս ներկայացնում էր մեկ թեմ: Ինչպես վկայում է Մովսես Խորենացին, եպիսկոպոսներն ունեին իրենց վիճակները (Խոր., Գ.ԿՁ), և, բացի այդ, ըստ Փավստոս Բուզանդի, շատ եպիսկոպոսներ էլ միայն պաշտոնյաներ էին և ծառայում էին կաթողիկոսական պալատում: Հետևաբար չի կարելի կարծել, որ Ագաթանգեղոսի հիշատակած 400 թիվը վերաբերում է նաև թեմերին, քանի որ եպիսկոպոսները վիճակների հոգևոր առաջնորդներն էին:

Փավստոս Բուզանդը, Կորյունն ու Մովսես Խորենացին չեն նշում եպիսկոպոսների որևէ ցուցակ, թեև նրանք հիշատակում են առանձին եպիսկոպոսների, նրանց գործունեության և վարքի մասին: Ստեփանոս Օրբելյանը Գրիգորի մասին նշում է, որ նա սահմանեց եկեղեցական դասերը, եպիսկոպոսների դիրքն ու պատվաստիճանը, որ իր հետ աթոռներով ու ակնակուռ բարձերով պետք է բազմեին 36 եպիսկոպոսներ՝ տասնութը աջից, տասնութը ձախից⁶:

Ուխտանես Եպիսկոպոսը իր «Պատմութիւն Հայոց»-ում հիշատակում է Գրիգորի կողմից կարգված եպիսկոպոսների 30 հոգուց բաղկացած ցուցակ, որից հետո, Ագաթանգեղոսի հիշատակած 400 թիվը պահպանելու համար ավելացնում է. «...և այլ ևս երեք հարիւր և եւթանասուն եպիսկոպոսք, որ և նոքա կարգեցան ի տեղիս տեղիս տեսուչք և Առաջնորդք յիւրաքանչիւր գաւառս ի փառս Աստուծոյ»⁷:

³ Տե՛ս Կորյուն, Վարք Մաշտոցի, Եր., 1941, ԺՁ (այսուհետ՝ Կոր.):

⁴ Տե՛ս Մովսեսի Խորենացույ Պատմութիւն Հայոց, Տփլիս, 1913, Գ.ԾԴ (այսուհետ՝ Խոր.):

⁵ Տե՛ս Ղազարայ Փարպեցույ Պատմութիւն Հայոց եւ Թուրք առ Վահան Մամիկոնեան, Թիֆլիս, 1907, Գ.ԽԷ (այսուհետ՝ Փարպ.):

⁶ Տե՛ս Ստեփանոս Օրբելեան, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, է (այսուհետ՝ Օրբ.):

⁷ Ուխտանես Եպիսկոպոս, Պատմութիւն Հայոց, Վաղարշապատ, 1871, 3 (այսուհետ՝ Ուխտ.):

Ելնելով Ուխտանեսի հիշատակած եպիսկոպոսների ցուցակի պատմա-աշխարհագրական տեղադրությունից՝ Բաբկեն Չարությունյանը եզրակացնում է, որ Ուխտանեսի հիշատակած եպիսկոպոսների ցուցակը Մարզպանական Չայաստանի թեմական բաժանման արտահայտություն է, որ մարզպանության շրջանում Չայաստանում առկա էր 30 հոգևոր թեմ: Պատմական աղբյուրների քննությամբ մենք հանգեցինք փոքր - ինչ այլ եզրակացության:

Նկատի ունենալով, որ, ինչպես վերը նշվեց, հոգևոր կյանքը և կառուցվածքը չէին կարող զերծ մնալ երկրի քաղաքական պատմության ազդեցությունից, ուստի հոգևոր թեմական բաժանումն էլ մենք դիտում ենք անընդհատ շարժման և փոփոխման մեջ՝ կախված դեպքերի պատմաքաղաքական զարգացումից:

Պատմական աղբյուրների քննությունը ցույց է տալիս, որ 4-րդ դարի սկզբներին, երբ Մեծ Չայքն ամբողջական թագավորական պետություն էր, հոգևոր թեմերն էլ պետք է լինեին ավելի շատ և ընդգրկեին ավելի մեծ տարածք: Եվ եթե հաշվի առնենք նաև այն տեղեկությունը, որ Գրիգոր Լուսավորչի թոռ Գրիգորիսը դարձավ եպիսկոպոս Վրաց և Աղվանից (Բուզ., 3.Ե), ապա գալիս ենք այն եզրահանգման, որ հայոց եկեղեցու ազդեցության աշխարհագրական սահմաններն ավելի մեծ են եղել, քան Չայկական պետության սահմանները: Ասվածի վկայությունն է նաև Ստեփանոս Օրբելյանի հիշատակած այն փաստը, որ Աղվանքի առաջին եպիսկոպոսը, Գրիգոր Լուսավորչից ձեռնադրվելով, 440 տարի ենթարկվել է հայոց կաթողիկոսներին (Օրբ., ԾԲ):

Արշակունիների թագավորության օրոք հայոց եկեղեցու ազդեցությունը տարածվում էր ոչ միայն Վիրքի ու Աղվանքի, այլև, ինչպես վկայում է Ստեփանոս Օրբելյանը, Փոքր Չայքի վրա, քանի որ, ըստ նրա տեղեկության, Արշակ Բ-ի օրոք մի շարք հոգևոր միջոցառումների հետ մեկտեղ մետրոպոլիտներ են նշանակվել նաև Մելիտենեում և Սեբաստիայում: Չետևաբար Լուսավորչի տոհմի իրավասության սահմաններն ավելի մեծ էին, քան Մեծ Չայքի սահմանները: Այս իրավիճակը պահպանվել է նաև 5-րդ դարի սկզբներին: Այլապես ինչպես բացատրել այն հանգամանքը, որ նախքան Բյուզանդական Չայաստանում դպրության գործին անցնելը՝ Մետրոպոլ Սահակ Պարթևի անմիջական հովանավորությամբ ձեռնարկում է Վրաց (Կոր., ԺԶ), իսկ այնուհետև Աղվանից (Կոր., ԺԸ) աշխարհների դպրության գործը:

Քննության ենթարկելով պատմական աղբյուրների տեղեկությունները՝ թագավորության ժամանակահատվածում հայ եկեղեցու թեմական բաժանման համար ավելի հավաստի ենք գտնում Ստեփանոս Օրբելյանի հիշատակած 36 թիվը: Եղիշեի հիշատակած 18 եպիսկոպոսներից բացի, այն ընդգրկում էր առանձին թեմեր հանդիսացող Վիրքը, Աղվանքը՝ Կորյունի վկայությամբ (Կոր., ԾԶ, ԾԸ), Աղծնիքը, Կորդուքը՝ Բուզանդի վկայությամբ (Բուզ., 4.ԺԵ), Փայտակարանը (Խոր., Գ.Գ), Չորրորդ Չայքը (Խոր., Բ.ՂԱ)՝ Սովսես Խորենացու վկայությամբ: Բացի հիշատակվածներից եկեղեցական թեմեր պետք է հանդիսանային Բարձր Չայքը, որի Դերջան գավառի Գինդ եպիսկոպոսի մասին հիշատակում են Կորյունը (Կոր., ԺԵ) և Սովսես Խորենացին (Խոր., Գ.ԾԵ), Պարսկահայքը, Գուգարքը, Ուտիքն ու Արցախը, որոնք Արշակունիների օրոք Մեծ Չայքի նահանգներից էին և չէին կարող դուրս մնալ հայ եկեղեցու ազդեցության ոլորտից:

Չի բացառվում, որ Աղվանքը կարող էր մեկից ավելի եպիսկոպոսներով ներկայացվել հայ եկեղեցու աստիճանակարգությունում, քանի որ, ինչպես

վկայում է Խորենացին, Աղվանքի հոգևոր առաջնորդ Երեմիան եպիսկոպոսապետ էր (Խոր., Գ.ԾԴ), իսկ սա նշանակում է, որ Աղվանքում հնարավոր էր ներքին թեմական բաժանում: Այս առումով պետք է նկատել, որ Մեծ Հայքի ընդարձակ նահանգները, ինչպիսիք էին Այրարատը, Վասպուրականն ու Տուրուբերանը, հոգևոր աստիճանակարգությունում նույնպես ներկայացված են եղել մի քանի եպիսկոպոսներով, որոնցից յուրաքանչյուրն առանձին թեմ է ներկայացրել: Նույնը հնարավոր էր նաև մյուս նահանգներում, որոնք դուրս են մնացել Սարգսյանական Հայաստանի սահմաններից:

4-րդ դարի թեմական բաժանման մասին Ստեփանոս Օրբելյանի հիշատակած 36 թիվը, երբ 18 եպիսկոպոս աջից էին նստած, իսկ 18-ը՝ ձախից, վստահելի է նաև այն տեսանկյունից, որ այդ ներկայացուցչական թիվը պահպանվում է նաև 450 թ. Արտաշատի ժողովում, միայն այստեղ ներկա էին 18 հոգևոր առաջնորդներ և 18 նախարարներ*:

Սի հանգամանք ևս, որը վստահություն է ներշնչում Ստեփանոս Օրբելյանի տեղեկության նկատմամբ: Նա ծանոթ է Եղիշեի աշխատությանը, Ուխտանեսի «Պատմութիւն Հայոց»-ին, այսինքն՝ ծանոթ է 18 և 30 հոգուց բաղկացած եպիսկոպոսների ցուցակին, բայց արժանահավատ է համարում այն տեղեկությունը, ուր խոսվում է 36 եպիսկոպոսներով կաթողիկոսական ժողովի մասին:

Արշակունյաց թագավորության ժամանակահատվածում հայ եկեղեցու իրավասության աշխարհագրական նման սահմանները կրճատվում են Մեծ Հայքի՝ Բյուզանդիայի և Պարսկաստանի միջև 387 թ. բաժանման, այնուհետև 428 թ. Արշակունյաց թագավորության անկման հետևանքով, երբ Մեծ Հայքի սահմանային գրեթե բոլոր աշխարհները բռնակցվեցին նրա հարևան երկրներին և աստիճանաբար դուրս մնացին հայ եկեղեցու ազդեցության ոլորտից: Այս երևույթի վրա ազդեցին նաև Քաղկեդոնի տիեզերական ժողովի ընդունած որոշումները:

Հայաստանի պատմության մարզականության ժամանակահատվածում հայ եկեղեցու ազդեցության աշխարհագրական սահմանների կրճատման հետ կրճատվում է նաև եկեղեցուն ենթակա թեմերի թիվը: Ասվածի ամենացայտուն վկայությունը 450 թ. Արտաշատի ժողովին ներկա եպիսկոպոսների թիվն է, որի մասին վկայում են Եղիշեն (Եղ., Բ) և Ղազար Փարպեցին (Փարպ., Բ.ԻԳ):

Այս երկու պատմիչների ներկայացրած անվանացանկերի համեմատությունը ցույց է տալիս, որ երկուսն էլ համամիտ են ներկաների 18 թվի հետ, այսինքն՝ երկուսն էլ հիշատակում են 18 եպիսկոպոսի անուն: Անվանացանկում միակ տարբերությունն այն է, որ Եղիշեի հիշատակած «Սարդոյաղոյ» եպիսկոպոսի փոխարեն Ղազար Փարպեցու ցուցակում նշվում է «Մանանաղայ» եպիսկոպոսը, իսկ մնացյալ 17 եպիսկոպոսները կան և՛ Եղիշեի, և՛ Ղազար Փարպեցու ներկայացրած ցուցակներում:

Այս նմանությամբ հանդերձ, երկու ցուցակները տարբերվում են միմյանցից իրենց ներկայացրած աստիճանակարգությամբ, որը վկայում է, որ Ղազար Փարպեցին չի ընդօրինակել Եղիշեի ցուցակը, այլ տվել է իր ժամանակաշրջանի՝ երկրում առկա հոգևոր աստիճանակարգության պատկերը: Ասվածի վկայությունն են հետևյալ դիտարկումները:

- Թեև 2 ցուցակներն էլ սկսվում են Հայոց կաթողիկոս Հովսեփի անվան հիշատակությամբ, բայց Եղիշեի մոտ հաջորդը հիշատակվում է Տարոնի եպիս-

* Տե՛ս Եղիշեի Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին, Եր., 1957, Բ (այսուհետ՝ եղ.):

կոպոս Սահակի անունը: Սա պատահական չէ, որովհետև, ինչպես վկայում է Ազաթանգեղոսը (Ազաթ., ճԺԵ), Տարոնի եպիսկոպոսը համարվում է առաջինը եպիսկոպոսների մեջ: Նույնն է նշում նաև Ստեփանոս Օրբելյանը (Օրբ., Է), երբ ասում է, որ Գրիգորի հետ ժողովի բազմող 36 եպիսկոպոսներից Հարքիհը աջից առաջինն էր մոտ նստում Գրիգորին: Այնքան մեծ է եղել Հարքի կամ Տարոնի եպիսկոպոսի առաջինը լինելու գաղափարը, որ Ուխտանեսի հիշատակած եպիսկոպոսների ցուցակում (Ուխտ., 3) նա նույնիսկ առաջինն է հիշատակվում՝ առաջ անցնելով Ոստանի եպիսկոպոսից:

- Եղիշեի ներկայացրած ցուցակում երրորդ տեղում Մանագլերտի եպիսկոպոսն է, որը սերվում է Աղբիանոս եպիսկոպոսի սերնդից (Եղ., Բ), իսկ վերջինս համարվում էր առաջինը այն եպիսկոպոսների մեջ, որոնք Գրիգոր Լուսավորչի կողմից եպիսկոպոս ձեռնադրվեցին քրմերի որդիներից: Այսինքն՝ Եղիշեի ցուցակում 3-րդ տեղում գտնվող եպիսկոպոսը նույնպես ազդեցիկ դեմք էր հոգևոր աստիճանակարգությունում:

- Ղազար Փարպեցու ներկայացրած եպիսկոպոսների ցուցակի քննությունից երևում է, որ առկա է եպիսկոպոսների նոր աստիճանակարգություն, որը համապատասխանում է մարզպանության շրջանին: Պետք է կարծել, որ այս աստիճանակարգությունը նմանություն ունի Գահնամակում⁹ ներկայացված նախարարական տոհմերի հերթականությանը: Իսկ Գահնամակը Պարսից արքունիքի կողմից վավերացվել է Հայաստան է բերվել Սահակ Պարթևի կողմից:

- Ղազար Փարպեցու ցուցակում 2-րդ տեղում Սյունյաց եպիսկոպոսն է, որը եպիսկոպոսների մեջ առաջինն է: Ըստ Գահնամակի՝ 1-ին տեղում է Սյունյաց նախարարը: Ստեփանոս Օրբելյանի վկայությամբ Սահակ Պարթևը Անանիային, որը Մետրոպի աշակերտն էր, ձեռնադրեց Սյունիքի եպիսկոպոսության համար՝ նստելու մետրոպոլիտության աթոռին և կոչվելու Հայոց պատրիարքի նախաթոռ (Օրբ., ժՁ): Այսինքն՝ Արշակ Բ-ի օրոք մետրոպոլիտ դարձած Սյունյաց եպիսկոպոսը (Օրբ., Է) Սահակ Պարթևի օրոք դառնում է պատրիարքի նախաթոռ, մի բան, որն արտացոլվում է Ղազար Փարպեցու ցուցակում:

- Ղազար Փարպեցու ցուցակում 3-րդ տեղում Արծրունյաց, իսկ 4-րդ տեղում Տարոնի եպիսկոպոսներն են: Ըստ Գահնամակի՝ նույնպիսի դասավորություն ունեն նաև Արծրունեաց և Մամիկոնեից տոհմերը: Փարպեցու ցուցակում այնուհետև հաջորդում են Ռշտունեաց, Մանձկերտի (որ է Մանագլերտի), Բագրևանդի, Բզնունեաց, Բասենի, Մարդաստանի, Վանանդի, Մոկաց, Անձևացեաց, Տայոց, Տարբերունի, Մանանաղի, Ամատունեաց և Ապահունեաց եպիսկոպոսները (թվով 18 եպիսկոպոս): Այս ցուցակը հիշատակելուց հետո Փարպեցին նշում է. «Այսոքիկ ամենեքեան եպիսկոպոսք» (Փարպ., Բ.ԻԳ), որից պետք է ենթադրել, որ այս եպիսկոպոսները ներկայացնում էին ժամանակի ողջ Մարզպանական Հայաստանը: Նույն բանը նկատելի է նաև եպիսկոպոսների թեմերի աշխարհագրական տեղադրությունից: Այսպես՝ Այրարատի, Բագրևանդի, Բասենի, Վանանդի եպիսկոպոսները ներկայացրել են Մեծ Հայքի Այրարատ աշխարհը, Սյունյաց եպիսկոպոսը՝ Սյունիքը, Արծրունյաց, Ռշտունյաց, Մարդաստանի, Անձևացյաց, Ամատունյաց եպիսկոպոսները՝ Վասպուրականը, Տարոնի, Մանձկերտի, Բզնունյաց, Տարբերուն, Ապահունյաց եպիսկոպոսները՝ Տուրուբերանը, իսկ Տայքից՝ Տայքը և Մոկքից՝ Մոկքը: Հիշատակված բոլոր աշխարհները գտնվում էին Մարզպանական Հայաստանի սահմաններում:

⁹ Տե՛ս Ն. Արոնց, Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, Եր., 1987, էջ 280-281:

Ցուցակում հիշատակված եպիսկոպոսներից բացառություն է կազմում Մանանադիինը, քանի որ Մանանադի գավառը գտնվում էր Բարձր Հայք աշխարհում, իսկ վերջինս Հայաստանի բյուզանդական տիրապետության տարածքում էր:

Բայց պետք է նշել, որ Մանանադիի եպիսկոպոս չկա Եղիշեի հիշատակած ցուցակում: Այստեղ դրա փոխարեն հիշատակվում է «Մարդոյաղոյ եպիսկոպոսը», որի թեմը գտնվում էր Տուրուբերան աշխարհում, իսկ վերջինս, ինչպես նշվեց, Մարզպանական Հայաստանի աշխարհներից էր: Այս տեսանկյունից մենք պելի հավանական ենք համարում Եղիշեի նշած «Մարդոյաղոյ եպիսկոպոսի» հիշատակությունը, քան Ղազար Փարպեցու՝ Մանանադիի եպիսկոպոսինը:

Բացի վերոբերյալ տարբերությունից, Եղիշեի և Ղազար Փարպեցու ցուցակները հիշատակում են նույն եպիսկոպոսների անունները: Հիմնական տարբերությունը եպիսկոպոսների աստիճանակարգության մեջ է, որն էլ պատմական տարբեր ժամանակահատվածների արտահայտություն է:

Այսպիսով կարծում ենք, որ Եղիշեի և Ղազար Փարպեցու ցուցակները Մարզպանական Հայաստանի թեմական բաժանման արտահայտություն են, ընդ որում՝ ժամանակագրական առումով Փարպեցու ցուցակում առկա աստիճանակարգությունը հաջորդում է Եղիշեի ցուցակում ներկայացվածին:

Բայց պատմագիտությանը հայտնի է, ինչպես վերը նշվեց, թեմական բաժանման՝ եպիսկոպոսների նաև այլ ցուցակ, որը պահպանվել է Ուխտանես եպիսկոպոսի «Պատմութիւն Հայոց»-ում (Ուխտ., 3):

Այս ցուցակում հիշատակվում են 30 թեմերի անուններ՝ առանց նշելու եպիսկոպոսների անունները: Բացի թվական տարբերությունից՝ այս ցուցակում նկատվում է նաև աստիճանակարգության որոշ տարբերություններ: Այստեղ չեն հիշատակվում 5-րդ դարի Մանազկերտի, Բզնունյաց ու Մարդաստանի եկեղեցական թեմերը: Համեմատելով 5-րդ դարի ցուցակների հետ՝ նկատում ենք, որ Եղիշեի ու Փարպեցու հիշատակած թեմերը Ուխտանեսի նշած աստիճանակարգությունում նույնպես առաջնային տեղեր են զբաղեցնում. միայն Անձևացյաց թեմն է, որ իջել է 25-րդը: Ցուցակում 1-ին տեղը գրավում է Հարքի եպիսկոպոսը, 2-րդը՝ Ոստանինը, 3-րդը՝ Տայոցը, այսինքն՝ ի տարբերություն Փարպեցու ցուցակի, Ուխտանեսի նկարագրած աստիճանակարգությունը վելի ավանդական է, և այստեղ ևս 1-ին եպիսկոպոսը համարվում է Հարքինը (կամ Տարոնինը): Այս ցուցակում 7-րդ տեղը գրավում է Սյունյաց եպիսկոպոսը, որի մասին վկայում է նաև Ստեփանոս Օրբելյանը (Օրբ., է), իսկ Բասենի եպիսկոպոսը, որը, ըստ Օրբելյանի, Գրիգոր Լուսավորչի աստիճանակարգությունում նստում էր ծախից առաջինը, այստեղ գրավում է միայն 11-րդ տեղը:

Ուխտանեսի հիշատակած ցուցակի քննությունը ցույց է տալիս, որ այստեղ թեմերի թիվը մեծացել է նախկինների մասնատման հետևանքով: Այսպես, եթե Եղիշեի և Փարպեցու մոտ ունենք Բագրևանդի թեմ, որի մասին Փավստոս Բուզանդը (Բուզ., 4.ԺԲ) և Մովսես Խորենացին (Խոր., 9.ԼԱ) նշում են, որ Խաղը Բագրևանդի և Արշարունյաց եպիսկոպոս էր, ապա Ուխտանեսի ցուցակում ունենք 2 առանձին թեմեր՝ «13. Բագրևանդայ» և «17. Արշարունեաց»: Թեմերի մասնատման երևույթը նկատելի է նաև Տուրուբերան և Վասպուրական աշխարհներում, որտեղ ևս նոր թեմեր են առաջացել, ինչպես «Արշամունեաց», «Մամիկոնեից», «Խորխոռունեաց», «Գնունեաց» եպիսկոպոսությունները՝ Տուրուբերանում, իսկ «Գողթան», «Ակեոյ», «Բաժունեաց», «Պալունեաց» եպիսկոպոսությունները՝ Վասպուրականում:

Հայտնի է, որ Արշակունիների արքայատոհմի վերացումից հետո երկրում ֆեոդալականացումը և նախարարական տոհմերի մասնատումը զարգացում ապրեցին: Սրան նպաստեց հողի նկատմամբ ժառանգատիրական իրավունքի հաստատումը, որը գնալով ավելի էր խորանում:

Եկեղեցական թեմերի մասնատման գործում ևս այս երևույթը պետք է որոշակի դեր խաղար: Այս տեսակետից շատ կարևոր է նաև Մովսես Խորենացու տեղեկությունն այն մասին, թե Սուրմակը կաթողիկոս դառնալուց հետո իր՝ Բզնունյաց գավառի եպիսկոպոսությունն ստացավ Պարսից թագավորից՝ ժառանգաբար նստելու իրավունքով (Խոր., Գ. 4Գ):

Այսինքն, ըստ Մովսես Խորենացու, Լուսավորչի տոհմի՝ կաթողիկոսական գահից զրկվելուց հետո երկրում առաջանում է ժառանգական իրավունք նաև եպիսկոպոսական աթոռի նկատմամբ, իսկ սա իր հերթին հանգեցնելու էր հոգևոր թեմերի մասնատմանն ու թվաքանակի աճին:

Եպիսկոպոսների վիճակների թվաքանակի շարժունակության մասին վկայում է Մովսես Խորենացու մեկ այլ տեղեկություն ևս, ըստ որի Հայաստանի՝ ազգությամբ ասորի կաթողիկոսներ Բրքիշոն և Շամվելը հափշտակում էին եպիսկոպոսների վիճակները, Սահակ Պարթևին թույլ չէին տալիս մահացածների փոխարեն նոր եպիսկոպոսներ ձեռնադրել, իսկ կենդանի եպիսկոպոսներին էլ, չնչին պատճառներ գտնելով, հալածում էին և բոլորի վիճակները խլում ու յուրացնում (Խոր., Գ. 4Զ):

Կարծում ենք, նման իրավիճակը և ֆեոդալականացման հետագա խորացումը հանգեցրել են եպիսկոպոսական թեմերի մասնատմանն ու թվաքանակի աճին, որի վկայությունն է Ուխտանեսի հիշատակած եպիսկոպոսների ցուցակը:

Այս ցուցակում առկա եպիսկոպոսների անվանումները վկայում են աշխարհագրական ավելի մեծ տարածք, քան Մարզպանական Հայաստանի սահմաններն են¹⁰ և պատմական ավելի ուշ ժամանակահատված: Հնարավոր է, որ Ուխտանեսի ցուցակը վկայում է Բագրատունյաց ժամանակաշրջանի հոգևոր թեմական բաժանումը, որի աշխարհագրական սահմաններն¹¹ ավելի մեծ էին, քան Մարզպանական Հայաստանինը:

Ընդհանրացնելով՝ նշենք.

- Մարզպանական Հայաստանի թեմական բաժանման վկայություն են Եղիշեի և Ղազար Փարպեցու ներկայացրած ցուցակները,
- Մարզպանական Հայաստանում առկա էր 18 եկեղեցական թեմ,
- այդ թեմերը բաժանվել են վիճակների, որոնք ևս ղեկավարվել են եպիսկոպոսների կողմից,
- մարզպանության ժամանակահատվածում, ի տարբերություն Արշակունյաց շրջանի, գոյություն է ունեցել հոգևոր նոր աստիճանակարգություն կաթողիկոսի գլխավորությամբ,
- հոգևոր թեմական բաժանումն անմիջականորեն իր վրա էր կրում երկրի պատմաքաղաքական զարգացման ազդեցությունը, որի հետևանքով հոգևոր թեմերի թիվը պատմական տարբեր ժամանակահատվածներում եղել է տարբեր:

¹⁰ Տե՛ս Բ. Հարությունյան, Հայաստանի պատմության ատլաս, Ա մաս, Եր., 2004, էջ 48-53:

¹¹ Տե՛ս նույն տեղը, էջ 62-63:

Р. В. АРУТЮНЯН - *Епархиальное деление армянской церкви в Марзпанской Армении.* - В статье вопрос о епархиальном делении армянской церкви рассматривается в непосредственной связи с историческими событиями, ибо церковь не могла действовать вне политических реалий времени. Изучив вопрос о епархиальном делении армянской церкви в период Марзпанства, автор пришел к следующим выводам:

— главным источником вопроса являются списки епископов, которые приводятся в трудах Егише и Лазаря Парпеци;

— в Марзпанской Армении существовало 18 епархий;

— эти епархии делились на более мелкие единицы, которые назывались «вичаками» (приход);

— во главе «вичака» стоял местный епископ;

— в марзпанский период, в отличие от периода Аршакидов, существовала новая церковная иерархия во главе с католикосом.